


17298

37 1919

2-36

295

ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆ ԱԳԻՐ



ԱՐԹՕՆՔ

ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ



6010

37
2-36

Ի Զ Ա Ր Ք

2001

Տպագրութիւն Քէշիկեան

1919

Հայաստան

Հրատարակչություն
Լեւոն Գրիգորյան
Լեւոն Գրիգորյան
Լեւոն Գրիգորյան

Բարձրագույն
Վերականգնող
Վերականգնող

37
2-36
370 4/5
2017-ՕՐ
ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ
ԶԱՐԹՈՆԳ
ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

31579-42

ՄԱՍ Ա.

ԱՆՈՒՆ ԵՒ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Յօդ. 1.— Գրասէր և գեղանուէր հայ երկսեռ երիտասարդներու Միութիւնը հիմնուած է Իզմիր 1 Յունվար 1919 ին Զարբոխ Լասրանական Միութիւն անուան տակ:

ՄԱՍ Բ.

ՆՊԱՏԱԿ

Յօդ. 2.— Միութիւնը պիտի հետապնդէ հետեւեալ նպատակները.

Ա. Զանալ մեր ազգին այս նոր բացուող դարաշրջանին, հայ երկսեռ երիտասարդութեան բարոյական ազնուացման և մտաւոր մակարդակի բարձրացման:

Բ. Համախմբել Միութեան շուրջ երկսեռ երիտասարդութիւն մը, որ կարող ըլլայ իր նախաձեռնութեամբ և ջանքերով, ստեղծել շինիչ մթնոլորտ մը, յիշեալ նպատակներուն իրագործման համար:

Գ. Ճանչցնել Հայ բնաշխարհը, Հայ պատմութիւնը, Հայ գեղարուեստը և Հայ հոգին վառ պահել ժողովրդի բոլոր խաւերուն մէջ:

Դ. Սերտ յարաբերութիւն հաստատել Ազգ. բարենպատակ բոլոր միութիւններու հետ և ստատրել անոնց իր նիւթական և բարոյական կարողութեանց սահմանին մէջ:

ՄԱՍ Գ.

ԾՐԱԳԻՐ (*)

Յօդ. 3.— Դիմել վերոյիշեալ նպատակներուն հետեւեալ միջոցներով.

(*) ԾԱՆՕԹ.— Ներկայ ծրագիրը վաւերացուած է Քաղաքական Ժողովոյ 1919 Մարտ 18 ի նիստին:

1004
1921

15047-18

9652

Ա. Կատարել դասախօսութիւններ ուսումնասիրուած նիւթերու վրայ (գրական, գիտական, ազգագրական, պատմական, քաղաքացիական) անդամներու կամ հրատարակուած հմուտ անձնաւորութիւններու կողմէ:

Բ. Սարքել գրական - գեղարուեստական հաւաքոյթներ:

Գ. Կազմակերպել գիշերային դասախօսութիւններ, և վիճարանական ժողովներ:

Դ. Ունենալ սրահ մը, իբր կեդրոն, իր մասնաւոր գրադարանովը, ուր պիտի գտնուին, Միութեան նիւթական կարողութեան չափով, օրաթերթեր, պարբերաթերթեր, գրքեր, հայերէն և ամենէն աւելի գործածական լեզուներով:

Ե. Ունենալ գրական - գեղարուեստական և գիտական պարբերաթերթ մը, երբ Միութիւնը ՚ի վիճակի զգայ ինքզինք նիւթապէս և մտաւորապէս:

ՄԱՍ Դ.

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Յօդ. 4.— Միութեան կազմը.— Միութիւնը ունի հետեւեալ կազմը — Անդամներ, Վարչուիւն և Ընդհ. ժողով:

I ԱՆԴԱՄՆԵՐ

Յօդ. 5.— Անդամները կրնան ըլլալ Գործօն, Համակիր և Պատուակալ:

Յօդ. 6.— Գործօն անդամ կրնան ըլլալ արուեստագէտներ, մտաւորականներ, ուսուցիչներ, երկրորդական վարժարանի շրջանաւարտներ և կամ առնուազն այդ ստաիճանի մտային զարգացում մը և ամբասիր վարք մը ներկայացնող երկսեռ ազգայիններ:

Յօդ. 7.— Գործօն անդամ կ'ընդունուի վարչութեան հաւանութեամբ: Ներկայացողին անձանօթ ըլլալու պարագային Միութեան անդամներէն միոյն վկայութիւնը բաւարար կը համարուի:

II ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՕՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ

Յօդ. 8.— Միութեան անդամները գործօն թէ համակիր պարտին վճարել 100 դրշ. իբրև մուտքի տուրք և 25 դրշ. ամսավճար:

Յօդ. 9.— Անդամուհիները և անկարող անդամները վարչութեան որոշումով զերծ կը մնան մուտքի վճարումէ:

Յօդ. 10.— Իւրաքանչիւր գործօն անդամ պարտք կ'ստանձնէ իր կարողութեան և ընդունակութեան չափով Միութեան նպատակներուն իրագործմանը սատարել:

Յօդ. 11.— Գործօն անդամ մը պարտաւոր է Միութեան կողմէ իրեն յանձնուած ո և է պարտականութիւն անթերի կատարել: Արգարացի առարկութիւններ նկատի կ'առնուին:

Յօդ. 12.— Ամէն գործօն անդամ բարոյական պարտք պէտք է համարէ Ընդհ. ժողովներուն ներկայ գտնուիլ: Յաջորդաբար երևք ազգարարութենէ վերջ բացակայիլ շարունակող գործօն անդամները համակիր անդամներու շարքին կը դասուին: Արգարանալի են բանաւոր պատճառով բացակայութիւնները:

III ԻՐԱԽՈՒՆՔ ԳՈՐԾՕՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ

Յօդ. 13.— Գործօն անդամները ազատ մուտք պիտի ունենան Միութեան սարքած բոլոր հաւաքոյթներուն:

Յօդ. 14.— Գործօն անդամներէն ո և է մէկը իր ձեռնհասութիւնը վարչութեան կողմէ հաստատելէ վերջ, կրնայ նախասիրած նիւթին վրայ խօսիլ հրապարակաւ:

Յօդ. 15.— Անդամները, գործօն թէ համակիր, կրնան Միութեան կազմակերպած գիշերային դասախօսութեանց մասնակցիլ կէս գին վճարելով:

Յօդ. 16.— Անդամները գործօն թէ համակիր անդամակցութենէ կը դադարեցուին Ընդհ. ժողովի երկու երրորդի պատճառաբանեալ վճիռով:

IV ՀԱՄԱԿԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

Յօդ. 17.— Համակիր անդամ կը նկատուին ամէն անոնք որոնք կը ներկայացնեն ամբասիր վարք մը և իրենց մտաւոր և նիւթական օժանդակութիւնը կ'ընծային Միութեան:

Յօդ. 18.— Համակիր անդամները պարտին անխափան վճարել իրենց ամսավճարները:

Յօդ. 19.— Համակիր անդամները կրնան Ընդհ. ժողովներու ներկայ ըլլալ, առանց սակայն ձայն ունենալու:

Յօդ. 20.— Համակիր անդամները ունենան պարտականութիւն ստանձնելու հարկադրեալ չ'են:

Յօդ. 21.— Համակիր անդամները առանց մուտքի կրնան մասնակցիլ Միութեան բոլոր հաւաքոյթներուն:

Վ ՊԱՏՈՒԱԿԱԼ ԱՆՂԱՄՆԵՐ

Յօդ. 22.— Պատուակալ անդամները կ'ընտրուին Ընդհ. Ժողովի ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ, Միութեան գործին բարոյական կամ նիւթական մեծ ծառայութիւն մը մատուցանող ազգայիններէ:

Յօդ. 23.— Միութիւնը կունենայ Պատուակալ Նախագահ մը որ ըստ իր փափաքին կրնայ նախագահել Վարչային և Ընդհ. Ժողովներուն:

Վ Ս Ր Զ Ո Ի Թ Ի Ի Ն

Յօդ. 24.— Վարչութիւնը Միութեան Գործադիր Մարմինն է, որուն պաշտօնն է.

Ա. Ծրագիր-կանոնադրերը, ինչպէս նաև Ընդհ. Ժողովի որոշումները գործադրել:

Բ. Որոշել ժողովներու գումարման օրը և առհասարակ վարել Միութեան ընթացիկ գործերը:

Գ. Պաշտպանել Միութեան շահերը և նախանձախնդիր ըլլալ անոր ծաւալումին և բարգաւաճման:

Դ. Կատարել նոր անդամներու ընտրութիւնը և ընդունելութիւնը:

Ե. Հատոյթի ազդիւրներ ստեղծել, ապահովել ու կատարել գանձումները:

Յօդ. 25.— Վարչութիւնը կը բաղկանայ եօթը գործօն անդամներ, ընտրուելով Ընդհ. Ժողովէն վեց ամիս պայմանաժամով որմէ ետք լեքընտրելի են: Ընտրութիւնները տեղի կ'ունենան Յունվարի և Յուլիսի սկիզբները:

Յօդ. 26.— Վարչութիւնը իր մէջ կ'ընտրէ Ատենապետ մը, Փոխ-Ատենապետ մը, Ատենադպիր մը, Փոխ-Ատենադպիր մը և Գանձապետ մը:

Յօդ. 27.— Եթէ Վարչութեան անդամներէն մին հրատարի, բանաւոր պատճառով մը, անոր կը յաջորդէ ուրիշ մը Ընդհ. Ժողովէն ընտրուած:

Յօդ. 28.— Վարչութիւնը, սովորաբար շաբաթը երկու անգամ նիստ կը գումարէ:

Յօդ. 29.— Վարչութեան որոշումները մասնաւոր տոմարի մը մէջ պէտք է արձանագրուին և ստորագրուին ներկայ անդամներէն:

Յօդ. 30.— Վարչութիւնը կ'ունենայ կանոնաւոր հաշուակալութիւն և ամէն երեք ամիսը անգամ մը կը կատարէ ելմասկան համարատուութիւն Ընդհ. Ժողովի առաջ:

Յօդ. 31.— Վարչութեան այն անդամները որոնք, առանց բանաւոր պատճառի յաջորդաբար երեք անգամ կը բացակային ժողովներէն, հրատարեցուած կը նկատուին:

Յօդ. 32.— Վարչութիւնը Միութեան պաշտօնական ներկայացուցիչն է. հետեւաբար իրաւունք ունի ազգային բարենպատակ բոլոր միութիւններուն հետ յարաբերութիւններ մշակել և բանակցութիւններ կատարել Միութեան անունով:

Յօդ. 33.— Վարչութիւնը իրաւասութիւն ունի Միութեան անդամներէն ունէ մէկուն պարտականութիւն մը յանձնելու և 'ի հարկին իր պատասխանատուութեան տակ կազմելու յանձնաժողովներ (Թատրոնի, լսարանի, գիշերային դասախօսութեանց, պարբերաթերթի, ընթերցատան, և այլն):

Յօդ. 34.— Յանձնաժողովները, գործի սկսելէ առաջ պարտին Վարչութեան ներկայացնել ծրագիր-կանոնադրի մը և զայն վաւերացնել տալէ վերջ միայն գործադրել:

VII ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 35.— Ընդհ. Ժողովը, կազմուած Միութեան գործադիր անդամներէն, Միութեան օրէնսդիր և համարատու մարմինն է:

Յօդ. 36.— Ընդհ. Ժողովի պաշտօնն է.
Ա. Բննել և վաւերացնել Վարչութեան հաշուեկշիւը և վեցամսեայ գործունէութեան համարատուութիւնը:

Բ. Բննել Վարչութեան կամ անդամներու կողմէ ներկայացուած ունէ առաջարկ կամ ծրագիր և առ այդ պարտու պատշաճը անօրինել:

Գ. Ընտրել նոր Վարչութեան անդամները և անոր գործունէութեան համար ուղղութիւններ գծել:

Դ. Կարգադրել անդամներու միջև ծագած անհամաձայնութիւնները:

Յօդ. 37. — Ընդհ. ժողովները կը հրաւիրուին Վարչութեան կողմէ և կը գումարուին ամիսը անգամ մը և ի պահանջել հարկին աւելի, բացառիկ պարագաներու տակ:

Յօդ. 38. — Արտակարգ Ընդհ. ժողով կը գումարուի Վարչութեան հրաւերով կամ անդամներու թիւին մէկ չորրորդին փափաքովը, որ գլխաւորապէս պէտք է հաղորդուի Վարչութեան:

Յօդ. 39. — Ընդհ. ժողովի գումարման օրը, ինչպէս նաև քըննութեան ենթարկելիք օրակարգը ժողովէն հինգ օր առաջ Վարչութիւնը կը ծանուցանէ Միութեան անդամներուն:

Յօդ. 40. — Ընդհ. ժողովը կը բացուի Վարչութեան ատենապետին կողմէ և կամ ի բացակայութեան փոխ-ատենապետէն:

Յօդ. 41. — Ընդհ. ժողովը օրինական կը համարուի Միութեան գործօն անդամներուն առնուազն երկու երրորդին ներկայութեամբ:

Յօդ. 42. — Երբ առաջին Ընդհ. ժողովի մը մէջ մեծամասնութիւն չ'է գոյացած, յաջորդ նիստին անդամներուն թիւը իրր մեծամասնութիւն կ'ընդունուի:

Յօդ. 43. — Ընդհ. ժողովի օրակարգի հարցերը կը լուծուին ձայներու առաւելութեամբ: Ձայներու հաւասարութեան պարագային ատենապետին ձայնը վճռող նշանակութիւն ունի:

Յօդ. 44. — Ընդհ. ժողովին վիճարանութեան ենթարկուելիք ամէն քննադատութիւն և դիտողութիւն պէտք է նախապէս գրաւոր կերպով հաղորդուի Վարչութեան Դիւանին:

Յօդ. 45. — Երագիր-կանոնադրի մասին, ի հարկին դիտողութիւններ նկատի առնուելով, փոփոխութիւններ և յաւելումներ կրնան ըլլալ, Ընդհ. ժողովի կողմէ, ամէն վեց ամիսը անգամ մը:

ՄԱՍ Ե.

ՀԱՍՈՑՔԻ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Յօդ. 46. — Միութեան եկամուտի ազրիւրներն են.

Ա. Անդամներու մուտքի տուրքը:

Բ. Ամսավճարները:

Գ. Նուիրատուութիւններ և կտակներ:

Դ. Երեկոյթներէ, ցերեկոյթներէ, թատերական ներկայացումներէ, վիճակահանութիւններէ գոյացած հասոյթներ: (*)

ՄԱՍ Զ.

ԼՈՒԾՈՒՄ ԵՒ ՀԱՇՈՒԵՑԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ

Յօդ. 47. — Միութիւնը կը լուծուի երբոր յարատեւող գործօն անդամներու թիւը տասէն պակաս ըլլայ և կամ ուրիշ զանազան պատճառներով Ընդհ. ժողովի ներկայ անդամներուն երեք չորրորդին հաւանութեամբը:

Յօդ. 48. — Լուծման պարագային Միութեան ունեցած գրամը և ինչքերը կը յանձնուին նոյն ատենուան Ազգ. կրթական Վարչութեան տրամադրութեան:

Ի դիմաց «Զարթօն» Լսարանական Միութեան
ԱՏԵՆԱԳՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ
ՆՇԱՆ ՎԱՐԳԱՆՆԱՆ ՏԻԳՐԱՆ ԵՐԱՄԵԱՆ



(*) Միութեան եկամուտներուն առնուազն 100 ին 10 ր իրր պահեստի դրամ անձեռնմխելի կը մնայ: Պահեստի դրամը ո եւ է ատեն, ո եւ է պատճառով չի կրնար ծախսուիլ առանց Ընդհ. ժողովի երկու երրորդի մեծամասնութեան հաւանութեան:

Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.

THE BOARD OF SUPERVISORS
COUNTY OF ALBANY
NEW YORK
RESOLVED, That the sum of \$100,000.00 be and the same is hereby appropriated for the purpose of paying the interest on the bonds of the County of Albany, New York, for the year 1900.

ATTEST:
CLERK OF THE BOARD OF SUPERVISORS

ALBANY, N. Y., 1900

11

104

1013

« Ազգային գրադարան »
17288
NL0050425

